



Էմիլյա ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական, ՀՌՀ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ՆԱԵՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆԱՆԲԱՅԻՆ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՎ ԲՆՈՒՅԹԻ ԳՆԱՏԱՏՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՏԺԻ ԱՐԳԱՐԱՅԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՏՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Յուրաքանչյուր գործով հանցանք կատարած անձի նկատմամբ պատժատեսակ և պատժաչափ ընտրելիս դատարանը պետք է պատշաճ գնահատման ենթարկի հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Հանցագործության հանրային վտանգավորությունը որոշվում է նախևառաջ այն հասարակական հարաբերությունների բնույթով ու սոցիալական նշանակությամբ, որոնց դեմ այն ուղղված է, այսինքն՝ հանցագործության օբյեկտով, ինչպես նաև մեղքի ձևով և տեսակով, նպատակներով, շարժառիթներով: Ինչ վերաբերում է հանցագործության հանրային վտանգավորության աստիճանին, ապա այն որոշելիս պետք է հաշվի առնվեն այնպիսի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ, ինչպիսիք են հանցագործության կատարման եղանակը, գործիքներն ու միջոցները, տեղը, ժամանակը, իրադրությունը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակիցների առկայությունը կամ բացակայությունը և այլն:

Այս առումով պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներում, պատժի տեսակը և չափը սահմանելիս օրենսդիրը, որպես կարևորագույն չափանիշ, հաշվի է առել տվյալ հանցագործության վտանգավորությունը: Այսինքն՝ օրենքն արդեն իսկ դատարանին հնարավորություն է տալիս «կողմնորոշվելու» հոդվածի սանկցիայի շրջանակում: Սակայն քննարկվող սկզբունքի համաձայն՝ դրա

հետ մեկտեղ դատարանը պետք է բացահայտի կատարված կոնկրետ հանցանքի առանձնահատկությունները, որոնք կարող են ազդել հանցագործության՝ հանրային վտանգավորության աստիճանի և բնույթի վրա (վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքն ու մասնակցության աստիճանը և այլն):

ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Վերը նշված հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքային պահանջներից է հանդիսանում նաև հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատումը: ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 70-րդ հոդվածի 2-րդ մասը նշված դրույթը առավել հստակեցված է սահմանում՝ նշելով, որ պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2019 5 - 6 (239-240)

ԴԱՏԱՎԱՆ
Իշխանություն

նպատակներով, դիտավորության կամ անգոյությունից տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերատոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ^{1,2}:

Քննարկվող հարցի վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում մեջբերել տեսաբանների կողմից արտահայտված դիրքորոշումները: Այսպես՝ Մ. Ի. Բաժանովը գտնում է, որ. «Հանրային վտանգավորության բնույթը որոշակի խմբի կամ որոշակի տեսակի հանցագործությունները բնութագրող հատկանիշ է»³: Սակայն ըստ Տ. Վ. Նեպոմյաշայայի՝ «Հանցագործության հանրային վտանգավորության բնույթի նման ըմբռնումը չափազանց նեղ է, քանի որ նման մոտեցման դեպքում այն որոշվում է հիմնականում կատարված հանցագործության օբյեկտով»: Հեղինակն առավել ճիշտ է համարում այն հեղինակների տեսակետը, որոնք գտնում են, որ հանցագործության հանրային վտանգավորության բնույթը հանդիսանում է հանցագործության տարբերակիչ հատկությունը, առանձնահատկությունը, հանրային վտանգավորության որակը (ինչպես յուրաքանչյուր առանձին հանցագործության, այնպես էլ հանցագործությունների մի ամբողջ խմբի) (Ն. Ֆ. Կուզնեցովա, Գ. Ա. Կրիգեր, Գ. Լ. Կրիգեր, Վ. Տկաչենկո, Ա. Վ. Նաումով, Լ. Ա. Պրոխորով և այլք)⁴: Հանրային վտանգավորության բնույթի ավելի լայն հայեցակարգեր առաջարկող դիրքորոշումների շարքում ուշադրության է արժանի Լ. Լ. Կրուգիկովի կարծիքը, ըստ որի՝ հանցագործության հանրային վտանգավորության բնույթը որոշվում է հանցագործության՝ այս կամ այն տեսակի արարքին պատկանելու հանգամանքով և օրենսդրի կողմից արտահայտվում է հանցակազմի տարրերի միջոցով⁵: Մ. Ա. Սկրյաբինը նշված հարցի վերաբերյալ

այն տեսակետն է հայտնել, որ հանցագործության հանրային վտանգավորության բնույթն արտահայտվում է համապատասխան հանցակազմի պարտադիր հատկանիշներով⁶: Նշվածի վերաբերյալ Ե. Վ. Բլագովը գտել է, որ «հանրային վտանգավորության բնույթ» ասելով արդեն իսկ վաղուց ընկալվում է ոչ թե կոնկրետ հանցագործության անհատական հատկանիշը, այլ տվյալ տեսակի հանցագործությունների հատկանիշները, օրինակ՝ սպանության կամ գողության ընդհանուր հատկանիշը: Վերջին տեսակետը ընդունելի է նաև ժամանակակից տեսության մեջ⁷:

Վերը շարադրվածից հետևում է, որ անհատականացման կարևորագույն չափանիշներից մեկը հանրային վտանգավորության աստիճանն է: Սակայն այս հարցը խնդրահարույց է: Կարելի է առանձնացնել հանրային վտանգավորության աստիճանի նեղ ընկալումը՝ որպես պատժի անհատականացման չափանիշ, որի դեպքում հանցագործության հանրային վտանգավորությունը դրա վնասաբեր լինելն է անձին, կազմակերպությանը, հասարակությանը կամ պետությանը: Համապատասխանաբար հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը նշված վնասաբեր լինելու մակարդակն է (չափը, ծավալը). եթե վերջինս ցածր է, ապա մյուս հավասար պայմաններում նշանակվում է մեղմ պատիժ, եթե բարձր է՝ խիստ պատիժ⁸: Այսպիսով, ըստ հեղինակի, հանցանքի «վնասաբերությունը» գնահատելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հանցագործության պատճառած վնասի բնույթին և չափերին, մասնավորապես վերջինիս հետևանքներին:

Սինոյն ժամանակ, հանցագործության սուբյեկտիվ հատկանիշները ևս կարևոր են արարքի հանրային վտանգավորության աստիճանը որոշելու համար: Անդրադառնալով դիտավորության այն տեսակներին, որոնք որոշվում են ըստ ծագման ժամանակի, որը, ինչպես



իրավացիորեն նշում է Ա. Ի. Բարոզը. «Իր էությունը չի կարող մեծ ազդեցություն ունենալ արարքի կամ մեղավոր անձի հանրային վտանգավորության աստիճանի վրա: Շատ ավելի կարևոր են այն պատճառները, թե ինչու անձն իր մտադրությունը միանգամից չի իրագործել: Եթե դա բացատրվում է նրա ոչ վճռականությամբ, հանրորեն վտանգավոր հետևանքների նկատմամբ բացասական զգացմունքային վերաբերմունքով, ապա նախապես ծագած դիտավորությունը բնավ ավելի վտանգավոր չէ, քան հանկարծակի առաջացածը: Մակայն, եթե հանցավոր մտադրության առաջացման և իրագործման միջև ժամանակի խզումը պայմանավորված է սուբյեկտի հատուկ «անցություն» կամ հանցավոր նպատակին հասնելու եղանակների բարդությամբ, ապա նախապես մտածված մտադրությունն էապես բարձրացնում է հանցագործության վտանգավորությունը»⁹: Դիտավորության աֆեկտային վիճակը միշտ ունի հանրային վտանգավորության ավելի ցածր աստիճան, քանի որ այն առաջանում է հանկարծակի՝ որպես անձի օրինական իրավունքների կամ շահերի խախտման արձագանք: Եվ եթե այն չլիներ անձի մոտ օրենքի շրջանակից դուրս գործելու ցանկություն չէր առաջանա:

Բացի դրանից՝ սուբյեկտիվ հատկանիշների շարքից ամենամեծ ազդեցությունը հանրային վտանգավորության աստիճանի վրա, թերևս, ունեն հանցագործության շարժառիթն ու նպատակը: Պ. Ս. Դագելն առանձնացրել է անձի վարքագծի երեք շարժառիթ. 1) հանրության համար վտանգավոր՝ հակապետական, անձնական, կրոնական, 2) չեզոք (տուժողի սխալ վարքագծի հետևանքով առաջացած վիրավորանք, ամոթ, խղճահարություն, կարեկցանք), 3) հանրօգուտ¹⁰:

Գիտնականների մի մասն էլ արդարացիորեն նշում են, որ հանրային վտանգավորության չափանիշը կապված է

հենց կոնկրետ կատարված արարքի հետ: Օրինակ, Ա. Ի. Կորոբեևն այս կապակցությամբ գրում է. «Արարքի հանրային վտանգավորության չափանիշը պետք է փնտրել ոչ թե դրա համար նախատեսված սանկցիայում, և ոչ թե դատարանի կողմից նշանակվող պատժի միջին չափում, այլ **հենց արարքի մեջ**¹¹ (ընդգծումը մերն է): Նմանատիպ մոտեցման կողմնակից են նաև Օ. Միխալը¹² և Ն. Ի. Մալեինը¹³:

Մեկ այլ խմբի հեղինակների կարծիքով՝ հողվածի սանկցիան է պայմանավորում արարքի հանրային վտանգավորությունը: Այսպես, Ա. Ա. Պիոնտկովսկին գրում է, որ հանցավոր արարքի հանրային վտանգավորության գնահատականը պետության կողմից արտահայտվում է այս կամ այն հանցագործության համար սանկցիայով նախատեսված և ասհմանված պատիժների բնույթի և չափի մեջ¹⁴:

Կարծում ենք, որ հանրային վտանգավորությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Առաջին դեպքում իրավաստեղծ գործունեության ընթացքում օրենսդիրը հիմքեր է ստեղծում հանցագործության տիպային հանրային վտանգավորության համար (Ա. Ա. Պիոնտկովսկու դիրքորոշումը), երկրորդ դեպքում՝ իրավակիրառ մարմինը որոշում է կոնկրետ հանցագործության վտանգավորությունը (Ա. Կորոբեևի, Օ. Միխալի, Ն. Մալեինայի դիրքորոշումը):

Ըստ Ա. Ա. Դեմիդովի՝ հանցագործության հանրային վտանգավորությունը ձևավորում է արարքի (գործողության կամ անգործության) հանրային վտանգավորությունից, այդ արարքի հանրորեն վտանգավոր հետևանքների և հանցավոր անձի հանրային վտանգավորությունից¹⁵: Տեսության մեջ արդարացիորեն նշվում է հանցավոր արարքի հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի կարևորության մասին. «Դրանք միշտ գտնվում են փոխկապակցվածության մեջ (...) իրենցից ներկայացնում են միևնույն

երևույթի միմյանց հետ անքակտելիորեն կապված կողմերը, որոնք արտահայտում են հանցագործության որակական (բնույթը) և քանակական (աստիճանը) կողմերի միջոցով»¹⁶:

Այսպիսով, հանրային վտանգավորության աստիճանն առավել հաճախ բնութագրվում է հանցագործության օբյեկտիվ կողմով, իսկ հանրային վտանգավորության բնույթը՝ ռոնձգության օբյեկտով և սուբյեկտիվ կողմով: Ուստի, Ա. Ի. Կոչկարևը միանգամայն արդարացի կերպով նշում է, որ կոնկրետ հանցագործության հանրային վտանգավորությունն արտահայտվում է նրանում, որ վերջինիս բնույթի և աստիճանի վրա ազդում են բոլոր այն հատկանիշները, որոնք իրենց համակցության մեջ կազմում են տվյալ հանցակազմը¹⁷:

Հարկ է համաձայնել Ա. Է. Ժալինսկու այն մտքին, որ արարքի քրեաիրավական գնահատման կառուցվածքում հանցագործության հանրային վտանգավորությունը կատարում է կրկնակի նորմատիվային գործառույթ. 1) արտացոլում է հանցագործության կառուցվածքային հատկանիշը, որն արտահայտում է դրանյութական բնույթը, 2) հանդես է գալիս որպես պատասխանատվության միջոցի և պատժի չափանիշ¹⁸:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև խնդրո առարկա հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների: Այսպես՝ Վճռաբեկ դատարանը Հ. Ղազարյանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ԵԱԵԿ/0030/01/17 որոշմամբ արտահայտել է ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների հասարակական վտանգավորության վերաբերյալ հետևյալ իրավական դիրքորոշումը. «Քաղաքական իրավունքների և ազատությունների, մասնավորապես՝ ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների դեպքում պատժի կրման նպատակահարմարության հարցը լուծելիս էական

նշանակություն ունի խախտված հասարակական հարաբերությունների բնույթի, կատարած հանցանքի հանրային վտանգավորության աստիճանի, հանցանքի կատարման եղանակի պատշաճ գնահատումը: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ ընտրական իրավունքի պատշաճ իրացման հետ կապված հանցագործությունների համար նշանակված պատիժն առանց հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը նվազեցնող փաստական հանգամանքների առկայության պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակների արդյունավետ կենսագործումը և իր բացասական ազդեցությունը կունենա երկրում ընտրական գործընթացների կազմակերպման ու անցկացման բնականոն ընթացքի վրա»¹⁹:

Վերոնշյալ որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանը կարևորել է այն, որ պատշաճ իրավական գնահատման են ենթակա ոչ միայն ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, այլև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը և հանցանքի կատարման եղանակը:

Ա. Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ին կայացված թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշմամբ՝ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է մարդու առողջության դեմ ուղղված դիտավորյալ հանցագործությունների դեպքում ընդհանրապես և առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքում մասնավորապես (ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդված) արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող հանգամանքներին, որոնք դատարանի կողմից պետք է հաշվի առնվեն յուրաքանչյուր գործով պատիժ նշանակելիս:

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ ՀՀ քրեական



օրենսգրքի 112-րդ հոդվածով պատիժ նշանակելիս դատարանները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն մեղքի ձևին և տեսակին, հանցագործության եղանակին, գործիքներին ու միջոցներին, մարմնական վնասվածքների քանակին, բնույթին, տեղակայմանը և այլ հանգամանքներին: Այսպես՝ Ա. Շահբազյանի գործով որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է. «ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքը կարող է կատարվել տարբեր եղանակներով: Մասնավորապես, հանցավորը տուժողի առողջությանը ծանր վնաս կարող է պատճառել՝ իր ֆիզիկական հնարավորությունները գործադրելով (ձեռքով կամ ոտքով հարվածելով, հրել-վայր գցելով, մարմնի որևէ մաս ջարդելով և այլն), տարբեր գործիքներ, իրեր կամ առարկաներ (դանակ, կացիկ, մուրճ, մետաղյա ձող, քար և այլն) օգտագործելով, զանազան մեխանիզմներ, միջոցներ կամ նյութեր (հրագեղ, թույն, թմրանյութ և այլն) կիրառելով, տարերային աղետի իրադրությունը կամ առավել վտանգի աղբյուրն օգտագործելով և այլն: Քննարկվող հանցագործության կատարման նշված եղանակները, ելնելով գործի փաստական հանգամանքների առանձնահատկություններից, տարբեր կերպ են բնորոշում հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության աստիճանը: Այսպես՝ տուժողի կենսական կարևոր օրգանների շրջանում դանակով հարված հասցնելիս հանցավորը ոչ միայն նախատեսում է հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացման ամխուսափելիությունը, այլև գիտակցում է կամ առնվազն պարտավոր է գիտակցել, որ իր գործողություններով տուժողին պատճառում է առողջության ծանր վնաս, որը վտանգավոր է կյանքի համար ևս նույնպես կարող է հանգեցնել մահվան: Այլ խոսքով՝ հանցավորը գործում է ուղղակի դիտավորությամբ և հստակ նախատեսում է իր արարքի և վտանգավոր հետևանքների

միջև առկա միանշանակ պատճառական կապը և դրա զարգացումը, այդ թվում՝ գիտակցում է կամ պարտավոր է գիտակցել, որ տուժողին կարող է պատճառել մահ, սակայն ինքնավստահությամբ կամ անփութությամբ հույս է ունենում, որ նշված ծանր հետևանքը չի առաջանա: Վերոգրյալն ինքնին վկայում է հանցավորի անձնավորության և կատարված հանցագործության վտանգավորության առավել բարձր աստիճանի մասին, ուստի օբյեկտիվորեն պետք է գնահատվի և հաշվի առնվի դատարանների կողմից պատիժ նշանակելիս»²⁰:

Վերոշարադրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանրային վտանգավոր բնույթը և դրա դեմ արդյունավետ պայքար մղելու անհրաժեշտությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այդ ոլորտում անհրաժեշտ է համապատասխան քրեական, այդ թվում՝ պատժողական խիստ քաղաքականության իրականացում: Մույն գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժն ակնհայտ մեղմ էր. ստորադաս դատարանները պատիժ նշանակելիս հաշվի չէին առել կատարված հանցագործության հանրային վտանգավորության աստիճանը և բնույթը բնութագրող, օբյեկտիվորեն գոյություն ունեցող այնպիսի տվյալներ, ինչպիսիք էին ամբաստանյալի կողմից կտրող-ծակող գործիքով տուժողի մարմնի տարբեր մասերին երեք հարված հասցնելը, այդ թվում՝ կենսականորեն կարևոր օրգանների շրջանում՝ տուժողի առողջությանը պատճառելով, ի թիվս այլնի, կյանքի համար վտանգավոր ծանր վնաս:

Պատասխանատվության և պատժի անհատականացման տեսանկյունից դիտավորության ուղղակի և անուղղակի տեսակների սահմանազատումն ունի կարևոր նշանակություն, քանի որ ուղղակի դիտավորությամբ կատարվող հանցանքներն օժտված են ավելի բարձր

հանրային վտանգավորությամբ, քան անուղղակի դիտավորությամբ կատարվողները: Այսպես՝ ուղղակի դիտավորության պարագայում հանցավորը նախատեսում է հետևանքների առաջացման անխուսափելիությունը կամ իրական հնարավորությունը, ինչը նշանակում է, որ անձը, համապատասխան հետևանքների առաջացումը ցանկանալով, կոնկրետ գործողությունների է դիմում, քայլեր է ձեռնարկում դրանց հասնելու համար: Մինչդեռ անուղղակի դիտավորության պարագայում հանրորեն վտանգավոր հետևանքները հանդես են գալիս որպես հանցավորի դիտավորությամբ ընդգրկված հանցագործության օժանդակ արդյունք, որոնց առաջացումը թեև անձը չի ցանկանում, այնուամենայնիվ գիտակցաբար թույլ է տալիս՝ ձեռնպահ մնալով դրանց կանխմանն ուղղված որևէ միջոց ձեռնարկելուց: Այնուհաստի, որ ուղղակի դիտավորության դեպքում համապատասխան հետևանքների առաջացման հավանականության աստիճանը շատ ավելի բարձր է, ինչն էլ իր հերթին բարձրացնում է հանցագործության հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Բացի դրանից՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև արարքի հանրային վտանգավորության աստիճանի վրա ազդող այնպիսի հանգամանքի վրա, ինչպիսիք են հանցագործության գործիքը կամ միջոցը: Մասնավորապես, կիրառված գործիքը կամ միջոցը տարբեր կերպ են բնութագրում ինչպես հան-

ցագործության վտանգավորության աստիճանը, այնպես էլ հանցավորի անձը: Վերոնշյալ հանգամանքը գնահատվում է որպես արարքի վտանգավորության աստիճանը բարձրացնող՝ քանի որ կոնկրետ դեպքում հանցագործության եղանակը, իրադրությունը, դրսևորած մեղքի ձևը և տեսակը, օգտագործվող գործիքը կամ միջոցը, կենսական նշանակություն ունեցող օրգանի շրջանում հասցված վնասն իրենց ամբողջության մեջ անկանխելի են դարձնում համապատասխան հետևանքների առաջացումը:

Ամփոփելով նշենք, որ դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին և բնույթին: Առանցքային խնդիր է այն, որ դատարանի կողմից պատիժ նշանակելիս պատշաճ իրավական գնահատման ենթարկվեն ոչ միայն ամբաստանյալի անձը բնութագրող, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքները, այլ նաև խախտված հասարակական հարաբերությունների բնույթը, կատարված հանցանքի հանրային վտանգավորության աստիճանը, վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում հանցավորի կատարած արարքը և մասնակցության աստիճանը:

¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, էլեկտրոնային ռեսուրս՝ <https://www.e-draft.am/projects/496/about> (վերջին մուտք՝ 17.05.2019 թվական):

² Նախագծում տեղ գտած մոտեցումը համընկնում է ՀՀ Վճռարեկ դատարանի՝ Մեյրան Աղախանյանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ին կայացրած որոշմամբ արտահայտված դիրքորոշման հետ:

³ Տե՛ս Բажанов М.И., Назначение наказания по советскому уголовному праву, Киев, 1980,

էջ 33:

⁴ Տե՛ս Непомнящая Т.В., Назначение уголовного наказания: теория, практика, перспективы. СПб., 2006, էջ 50:

⁵ Տե՛ս Энциклопедия уголовного права: назначение наказания. СПб., 2007, h. 9, էջ 244:

⁶ Տե՛ս Скрыбин М.А., Общие начала назначения наказаний и их применение к несовершеннолетним, Казань, 1988, էջ 54:

⁷ Տե՛ս Благов Е.В., Применение общих начал назначения уголовного наказания: Моногра-



фия, М., 2013, էջ 39:

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 86:

⁹ Տե՛ս Էնցիկլոպедия уголовного права: состав преступления. СПб., 2005, Հ. 4, էջ 687:

¹⁰ Տե՛ս Дагель П.С., Проблема вины в советском уголовном праве // Учен. зап. Дальневосточного ун-та. Владивосток, 1968, էջ 163:

¹¹ Տե՛ս Коробеев А.И., Советская уголовно-правовая политика: проблемы криминализации и пенализации, Владивосток, 1987, էջ 144:

¹² Մասնավորապես, Օ. Մխիթարյանը գրում է. «Հողվածի սանկցիան չէ, որ պետք է առաջացնի հանցագործության կատեգորիա (հանրային վտանգավորության բնույթ ու աստիճան), այլ հանցագործության կատեգորիան՝ համապատասխան պատիժ»: Տե՛ս Михаль О., Принципы классификации наказаний по характеру и степени их строгости // Уголовное право, 2001, № 1, էջ 25:

¹³ Մասնավորապես, Ն. Մալեինը գրում է. «Պատասխանատվության արդարությունը արտահայտվում է օրենքի սանկցիաների առջև բոլոր քաղաքացիների հավասարության, կախված իրավախախտման (հանցագործության և այլ իրավախախտման) հանրային վտանգավորությունից պատասխանատվության տեսակը ճիշտ սահմանման, օրենքով պատասխանատվության միջոցի ճիշտ սահմանման և իրավապահ մարմինների կողմից դրա կիրառման մեջ»: Տե՛ս Малейн Н.С., Юридическая ответственность и справедливость. М., 1992, էջ 12:

¹⁴ Տե՛ս Пионтковский А.А., Основные аспекты теории наказания // Советское государство и право. М., 1969, № 7, էջ 35:

¹⁵ Տե՛ս Демидов А.А., Социальная ценность и оценка в уголовном праве. М., 1975, էջ 68:

¹⁶ Տե՛ս Рясов А.И., Принцип справедливости в назначении наказания при множественности преступлений. Дисс. канд. юрид. наук. Ставрополь, 2004, էջ 92:

¹⁷ Տե՛ս Кочкарев А.И., Назначение более мягкого наказания, чем предусмотрено законом. Дисс. канд. юрид. наук, Рязань, 2005, էջ 170:

¹⁸ Տե՛ս Жалинский А.Э., Общественная опасность преступления в структуре уголовно-правовой оценки деяния // Юрист, №5, 2001, էջ 57:

¹⁹ Տե՛ս նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Դավիթ Ալեքսանյանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՇԳ-3/0037/01/17 որոշումը:

²⁰ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Արմեն Շահբազյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ի թիվ ԵՇԳ/0143/01/13 որոշումը: Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր իրավական դիրքորոշումը նաև Վարդան Մանասյանի գործով 2014 թվականի օգոստոսի 15-ին կայացված թիվ ԵՇԳ/0144/01/13, Մարատ Սարգսյանի գործով 2015 թվականի հունիսի 5-ին կայացված թիվ ԱՐԳ/0144/01/12, Արսեն Կարապետյանի և Ռուբեն Գուլգուլյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԱԳԳ/0011/01/14, Նարեկ Խաչատրյանի գործով 2015 թվականի օգոստոսի 28-ին կայացված թիվ ԵԿԳ/0191/01/14 որոշումների շրջանակներում:

RESUME - РЕЗЮМЕ

CONSIDERATION OF THE DEGREE AND THE NATURE OF PUBLIC DANGER OF A CRIME AS A GUARANTEE OF FAIR PUNISHMENT

Emilya Abrahamyan

*Assistant to the Chairman of the Criminal chamber of the RA Cassation court,
PhD student of the Chair of Criminal Law and Criminal Procedure Law of RAU
Institute of Law and Politics*

The article discusses the problem of taking into account by courts such a general principle of the imposition of punishment as taking into account the nature and the degree of public danger of the crime committed. The nature and the degree of public danger of a crime are always interrelated, since they are inseparably linked sides of the same phenomenon. When sentencing the court assesses the nature and the degree of public danger of the crime. The nature of the public danger of the committed crime is determined, first of all, by the object of infringement, its significance and its value for the society and the state, that is, which public relations are violated as a result of the crime, damages caused to them, the extent of the damages and other consequences must be clarified. The degree of public danger depends on the severity of the crime: it is a quantitative characteristic of criminal acts of the same nature.

General principles of sentencing are guarantees of fair and appropriate punishment. They help to comply with the requirements of the law when choosing an individual punishment for a specific person for a specific crime. The question of taking into account the nature and the degree of public danger of the crime committed has always been relevant in the science of criminal law. The author provides definitions expressed by scientists, as well as some examples from judicial practice.

Keywords: *punishment, principle of justice, criteria of individualization of punishment, degree and nature of public danger, crime.*

УЧЁТ СТЕПЕНИ И ХАРАКТЕРА ОБЩЕСТВЕННОЙ ОПАСНОСТИ ПРЕСТУПЛЕНИЯ КАК ГАРАНТИЯ СПРАВЕДЛИВОГО НАКАЗАНИЯ

Эмиля Абраамян

Помощник Председателя Уголовной палаты Кассационного суда РА, соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Института права и политики РАУ

В статье исследуется проблема учёта судами такого общего начала назначения наказания, как учёт характера и степени общественной опасности совершённого преступления. Характер и степень общественной опасности преступного деяния всегда находятся во взаимосвязи, поскольку они представляют неразрывно связанные между собой стороны одного и того же явления. При назначении наказания суд оценивает характер и степень общественной опасности преступления. Характер общественной опасности совершенного преступления определяется, прежде всего, объектом посягательства, его значимостью и ценностью для общества и государства, то есть должно быть выяснено, какие общественные отношения нарушаются в результате преступления, причинения им вреда, размера причиненного ущерба и другие последствия. Степень общественной опасности зависит от тяжести преступления, является количественной характеристикой преступных деяний одного и того же характера.

Общие принципы назначения наказания – гарантия справедливого и целесообразного наказания.



Քրեական իրավունք

Они способствуют соблюдению требований закона при выборе индивидуального наказания конкретному лицу за конкретное преступление. Вопрос учета характера и степени общественной опасности совершенного преступления всегда был актуальным в науке уголовного права. В данной статье приводятся определения, высказанные учеными, а также рассматриваются некоторые примеры из судебной практики.

Ключевые слова: наказание, принцип справедливости, критерии индивидуализации наказания, степень и характер общественной опасности, преступление.

Բանալի բառեր - պարիժ, արդարության սկզբունք, պարժի անհարակակցման չափանիշներ, հանրային վրանգավորության աստիճանն ու բնույթը, հանցագործություն:

Է. Աբրահամյան - ՀՀ Վճռարեկ դատարանի քրեական պալատի նախագահի օգնական, ՀՌ-Հ իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ emilyaabrahamyan@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 26.07.2019, տրվել է գրախոսության՝ 26.07.2019, երաշխավորվել է ՀՀ Վճռարեկ դատարանի քրեական պալատի նախագահ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Թադևոսյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 17.07.2019